# Որոշումների ժամանակը. Մերձավորարևելյան ճգնաժամն ուժային սրացման շեմին

**ԱՌՎԱԿ կենտրոնի մեկնաբանությունը, 23.11.2026 թ.**[1]

*Անոտացիա*

*ԱՌՎԱԿ կենտրոնի մեկնաբանությունը դիտարկում է այն հաստատութենական, քաղաքական և ռազմական գործոնները, որոնք ժամանակի առումով նեղ պատուհան են սահմանում Իրանի դեմ ԱՄՆ-ի և Իսրայելի հնարավոր ուժային սցենարի համար: Վերլուծվում են Իսրայելի և ԱՄՆ-ի ներքաղաքական սահմանափակումները, Պեկինում կայացած ոչ պաշտոնական բանակցությունների արդյունքները, ինչպես նաև Պենտագոնի ռազմական պատրաստվածության ցուցանիշները, ներառյալ FORTRESS ծրագիրը:*

***Բանալի բառեր***. *ԱՌՎԱԿ, Իրան, ԱՄՆ, Իսրայել, Դոնալդ Թրամփ, Բինյամին Նեթանյահու, Գադի Այզենկոտ, Պեկինյան խորհրդակցություններ, FORTRESS ծրագիր, CENTCOM, սրացում:*

## 1. Ներքաղաքական ժամկետները Իսրայելում և ԱՄՆ-ում

Ստացված տեղեկությունների համակարգված վերլուծությունը ցույց է տալիս, որ Իրանի շուրջ ստեղծված իրադրությունը հասել է վճռորոշ փուլի: Վաշինգտոնի և Թել Ավիվի վարչակազմերն ունեն ընդամենը մի քանի շաբաթով սահմանափակված չափազանց սեղմ ժամանակամիջոց՝ Թեհրանի դեմ հերթական ռազմական սցենարը մեկնարկելու համար: Այս հնարավորության պատուհանը կփակվի, հենց որ ուժի մեջ մտնեն որոշումների ընդունումը սահմանափակող հաստատութենական արգելքները:

Մինչև 03.12.2026 թ. լրանում է Իսրայելի պետության օրենսդրությամբ սահմանված ժամկետը, որի ընթացքում խորհրդարանական ընտրություններում հաղթած «Յաշար» կուսակցության առաջնորդ Գադի Այզենկոտի գլխավորած դաշինքը պարտավոր է կոալիցիոն կառավարություն ձևավորել: Եթե նշված ամսաթվին Քնեսեթում կոալիցիայի կազմումը, կաբինետի անդամների նշանակումը և նրանց երդմնակալությունը ձախողվեն, նախագահ Իցիակ Հերցոգը իրավասու կլինի կառավարություն կազմելու մանդատը փոխանցել մեկ այլ թեկնածուի (ամենայն հավանականությամբ՝ Բինյամին Նեթանյահուին) կամ ուղղակիորեն Քնեսեթին: Այսպիսով, ԻԻՀ շուրջ լարվածության սրումը մինչև դեկտեմբերի 3-ը կարող է խափանել Գ. Այզենկոտի դաշինքի և այսպես կոչված «*Արաբական կուսակցությունների*» միջև կոալիցիոն համաձայնության ձեռքբերումը: Հակառակ դեպքում Բ. Նեթանյահուն մինչև իր լիազորությունների ժամկետի ավարտը պահպանում է ձևավորվող կաբինետն Իրանի հետ զինված հակամարտության մեջ ներքաշելու հնարավորությունը, որին ընդդիմախոսներն ավելի վաղ ձեռնպահ էին մնում մասնակցելուց՝ նման սցենարը համարելով աննպատակահարմար ու էական ռիսկեր պարունակող:

ԱՄՆ Կոնգրեսի երկու պալատներում ուժերի նոր դասավորվածությունը, որը ձևավորվել է նոյեմբերին կայացած միջանկյալ ընտրությունների արդյունքում, ժամանակի առումով

[1] Նյութի բնօրինակը (ռուս.) հրապարակվել է մեր կայքէջում 20.11.2026 թ.:

միջակայք է սահմանել Դոնալդ Թրամփի ծրագրերի իրականացման համար՝ ուղղված ԻԻՀ նկատմամբ սրացման վերսկսմանը: Կոնգրեսականները պաշտոնապես իրենց լիազորությունները կստանձնեն 2027 թ. հունվարի 3-ին՝ ժամը 12:00-ին: Այդ պահից սկսած Դեմոկրատական կուսակցությունը կստանձնի մեծամասնության վերահսկողությունը թե՛ Սենատում և թե՛ Ներկայացուցիչների պալատում: Նման բաշխվածությունը ոչ միայն էապես կսահմանափակի երկրի ղեկավարի՝ ռազմական գործողություններ իրականացնելու իրավասությունները, այլև լրացուցիչ իրավական հիմքեր կընձեռի գործող նախագահի իմպիչմենտի ընթացակարգ նախաձեռնելու համար:

Մինչև հունվար Դ. Թրամփի վարչակազմի կողմից նախաձեռնված հնարավոր ռազմական գործողությունները կանխամտածված արգելափակելու նպատակով, 19.11.2026 թ. ԱՄՆ Սենատում դեմոկրատական կուսակցության ներկայացուցիչները փորձեցին անցկացնել «Ռազմական լիազորությունների մասին» բանաձև: Այդ նախաձեռնությունը պետության ղեկավարին պարտավորեցնում է դադարեցնել Իրանի դեմ ռազմական գործողությունները կամ ստանալ ԱՄՆ Կոնգրեսի պաշտոնական հավանությունը: Քվեարկության արդյունքում բանաձևը մերժվեց (51 «դեմ», 48 «կողմ»): Հատկանշական է, որ նախաձեռնությանն աջակցություն են ցուցաբերել 3 հանրապետական սենատորներ (Սյուզան Քոլինզ, Լիզա Մուրկովսկի և Ռենդ Փոլ), մինչդեռ դեմոկրատ սենատոր Ջոն Ֆետերմանը քվեարկել է իր խմբակցության դիրքորոշմանը հակառակ:

Միևնույն ժամանակ, ամերիկացի վերլուծաբաններն ընդգծում են, որ այս բանաձևի ընդունումն առավելապես հռչակագրային բնույթ կկրեր, քանի որ «*նույնիսկ դրա հաստատման դեպքում ԱՄՆ վարչակազմը մեծ հավանականությամբ կխուսափեր դրա վավերացումից և հետագա իրագործումից*»: Նրանց եզրակացությունների համաձայն՝ Իրանի նկատմամբ Թրամփի ռազմատենչ ուղեգծին հակազդելու իրավական լծակները Դեմոկրատական կուսակցությանը կանցնեն միայն հունվարի 3-ից հետո, երբ նրա ներկայացուցիչները, ամենայն հավանականությամբ, քայլեր կձեռնարկեն ռազմական գործողությունների անցկացման համար հատկացումներն օրենսդրորեն սահմանափակելու և արգելափակելու ուղղությամբ: Հետևաբար, Դ. Թրամփը, Բ. Նեթանյահուն և նրանց մերձավոր շրջապատից կոշտ ուղեգծի կողմնակիցները ժամանակի առումով շատ սահմանափակ «պատուհան» ունեն՝ բառացիորեն մի քանի շաբաթ: Այս ժամանակահատվածը նրանց տեսական հնարավորություն է տալիս նախաձեռնելու ռազմական գործողություններ՝ նվազագույն արտաքին և ներքին հակազդեցությամբ:

### 2. Արտաքին քաղաքական գործոն. Պեկինյան եռանկյունին

Վերլուծաբանների մեծ մասի կարծիքով՝ Վաշինգտոնի իրանական քաղաքականության վերջնական որոշումների վրա վճռորոշ ազդեցություն են թողնում ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի, ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի և ՉԺՀ ղեկավար

Սի Ցզինպինի միջև կայացած բանակցությունները: 2026 թ. նոյեմբերի 19-ին Պեկինում տեղի ունեցած երկրների առաջնորդների ոչ պաշտոնական գագաթնաժողովում իրանական հիմնախնդիրը, ուկրաինական ու թայվանյան ճգնաժամերի հետ մեկտեղ, դարձել էր քննարկումների առանցքային թեմաներից մեկը: Ամերիկյան կողմը փորձում էր հիմնավորել Թեհրանի դեմ ռազմական գործողությունների անխուսափելի լինելը: Դրա դիմաց Վաշինգտոնն ակնկալում էր Մոսկվայի չեզոքությունը Ուկրաինայի վերաբերյալ ամերիկյան *«խաղաղ նախաձեռնության»* հարցում, ինչպես նաև Պեկինի զսպվածությունը Արևելաչինական ծովում իրադրության հնարավոր սրման համատեքստում, ինչի վտանգի մասին նախապես զգուշացրել էին չինական պետական աղբյուրները: Ըստ էության, Սպիտակ տունը ձգտում է թուլացնել գլոբալ հակամարտությունների հիմնական օջախները: Իրենց հերթին, Ռուսաստանն ու Չինաստանը Իրանի դեմ ԱՄՆ-ի հնարավոր ուժային քայլերի լռելյայն ընդունումը դիտարկում են որպես հնարավորություն՝ թայվանյան և ուկրաինական ուղղություններով սեփական ռազմավարական նպատակ առաջ մղելու համար:

### 3. Ռազմական պատրաստություններ և FORTRESS ծրագիրը

Մինչ Վաշինգտոնում վերլուծվում են Պեկինում ռազմավարական խորհրդակցությունների արդյունքները, Մերձավոր Արևելքում արձանագրվում են ԱՄՆ Զինված ուժերը մարտական բարձր պատրաստության վիճակի բերելու նշաններ: Մասնավորապես, ըստ *Israel Hayom* թերթի հրապարակման՝ CENTCOM-ի հրամանատարական կազմն արդեն իսկ B-1 և B-2 ռազմավարական ռմբակոծիչները դրել է «*մարտական կիրառման 96-ժամյա պատրաստվածության ռեժիմի*»: Պենտագոնի՝ լայնածավալ էսկալացիաներն արագորեն կյանքի կոչելու պատրաստակամության ակնհայտ վկայությունն է FORTRESS համաշխարհային ծրագրի մեկնարկը, որի մասին սկզբնապես հայտնել էր *Fox News* հեռուստաընկերությունը:

Այս ծրագրի հիմնական չափորոշիչները.

1. Ինքնավարության ապահովում. Քաղաքացիական ենթակառուցվածքների խաթարման կամ մատակարարման շղթաների ընդհատման պարագայում՝ ԱՄՆ ռազմակայանների պատրաստվածության ապահովում առանց արտաքին աջակցության՝ նվազագույնը 90 օր տևողությամբ:

2. Էներգետիկ անվտանգության ապահովում. կենտրոնացված էլեկտրամատակարարման խափանումների պարագայում շարժական միջուկային ռեակտորների, տեղական միկրոցանցերի (microgrids) և հզոր կուտակիչ մարտկոցների միասնական համակարգերի կիրառում:

3. Պաշարներ և կապ. վառելիքի և զինամթերքի լրացուցիչ պաշարների, պահուստային մատակարարման ուղիների ստեղծում և կապի ապահովում GPS-ի ճնշման և արբանյակների խափանումների ժամանակ:

Չնայած Պենտագոնի ներկայացուցիչները ԶԼՄ-ներում պնդում են, որ FORTRESS ծրագիրը ներկայացնում է լոկ երկարաժամկետ միջոցառումների համալիր՝ ուղղված ռազմակայանների կայունության բարձրացմանն ու օբյեկտների պաշտպանությանը *«լայնածավալ հակամարտությունների պարագայում»* և կապված չէ որևէ կոնկրետ ռազմական թատերաբեմի հետ, փորձագիտական-վերլուծական համայնքը վստահ է. գործնականում իրականացվում է Իրանի շուրջ ճգնաժամային սցենարի անմիջական նախապատրաստում:

Բացի այդ, հաշվի առնելով առաջատար երեք տերությունների ղեկավարների պեկինյան բանակցությունների անորոշ արդյունքները՝ չի բացառվում, որ Վաշինգտոնը ձգտում է նվազեցնել իր սփռված ուժերի համար առաջացող գլոբալ ռիսկերը, եթե հակաիրանական արշավը վերածվի լայնամասշտաբ հակամարտության:

Հետևաբար, Մերձավոր Արևելքում ուժային սցենարի իրականացման համար հատկացված ժամանակային պատուհանը չափազանց նեղ է: Այժմ միջազգային հանրության ուշադրությունը կենտրոնացած է Դոնալդ Թրամփի սպասվելիք պաշտոնական որոշման վրա, որի մասին հայտարարությունն ակնկալվում է առաջիկայում: